ՔԴՕ 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՔԴՕ 105-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, գործի քննության հետ կապված այլ ծախսեր են գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարները:

ՔԴՕ 108-րդ հոդվածի համաձայն.

«1. Դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում:

2. Գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:»:

ՔԴՕ 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Դատարանն արձանագրում է, որ սույն գործով դատական ծախսերը կազմված են հայցվորի կողմից վճարված 50.000 ՀՀ դրամ գումարից, որը հաստատված է պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով կատարված ծածկագրով և հաշվի առնելով հայցը բավարարելու հանգամանքը ենթակա է հատուցման Պատասխանողի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 362-րդ հոդվածներով՝

ՎՃՌԵՑ

1. Մուրադյան Ծին 86 ՍՊ ընկերության հայցը բավարարել: Անվավեր ճանաչել ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի՝ Մուրադյան Ծին 86 ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 03.09.2024թ.-ին կայացված որոշումը:

2. Ներքին գործերի նախարարությունից հօգուտ Մուրադյան Ծին 86 ՍՊ ընկերության որպես դատական ծախս բռնագանձել՝ 50.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար: Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Դանիել Մխեյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am